

Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

2014թ-ի հունիսի 27 –ին ժամը 15:00 –ին Արարատի մարզի Վ. Դվին համայնքում տեղի ունեցավ հանրային լսում , որը վարում եր համայնքի ղեկավար՝ Լյուդմիլա Պետրովան , արձանագրում եր աշխատակազմի քարտուղար՝ Ս. Տամրազովան:

Լսումներին մասնակցում էին գյուղապետարանի աշխատակազմը, բուժ. ամբուլատորիայի աշխատակիցները, ավագանին և բնակչությունը:

Լսեցին համայնքում կատարված հետևյալ աշխատանքների մասին:

2014թ-ի ընթացքում համայնքի բյուջեի ֆինանսավորմամբ կատարված ընթացիկ և կապիտալ աշխատանքների մասին:

Համայնքում կազմակերպված կատարվում է աղբահանությունը:

Բնակիչների խնդրանքով գյուղ. մասնագետի կողմից կատարվել է հողամասերի չափագրում:

Սոցիալապես անապահով 114 ընտանիքներին տրամադրվել է ֆինանսական աջակցություն:

Համայնքում կազմակերպվել է և ավագվել է գումար ազոտական պարատանյութի տրամադրմանը:

Բնակչությանը տրամադրվել է 105 տողեկանք:

Դրամական օգնություն է ցուցաբերվել սոցիալապես անապահով ընտանիքներին 1375.0 հ.դր չափով :

Մահվան կապակցությամբ հանգուցյալների ընտանիքներին դրամական օգնություն է ցուցաբերվել 170.0 հ.դրամի չափով:

Մայիսի 9-ի կապակցությամբ տոնակատարության միջոցառում է անցկացվել:

Վերջին զանգի կապակցությամբ շրջանավարտներին զնվել են նվերներ նվերներ- 160.0հ.դ. չափով :

Հողի հարկ է հավազագրվել 1849.0 հ. դրամ , որը կազմում է 30% :

Գույքահարկ է հավազագրվել 562.0 հ.դրամ, որը կազմում է 80% :

Հաշվարկվել են ցրտահարությունից տուժած համայնքի գյուղացիական

տնտեսություններին հասցված վնասները:

Ցրտահարված տնտեսություններին տրամադրվել է պետության կողմից հատկացված սերմացուներ:



Լ Պետրովա